ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան բնակավայրի թվով 292 վերելակների արդիականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/27» ծածկագրով հրատապ բաց մրցույթով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

27/07/2022թ.
ժամը 17:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյան, Գ. Խաչատրյան, Ս. Չիտչյան, Լ. Իսահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Զոհրաբյան

1. Բացված հայտերում պահանջվող/պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
(Ա. Զոբանյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.
ա) «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ում հրատապ բաց մրցույթի փոխարեն գրված է գնանշման հարցում, 1.3 հավելվածի 4.5ա մասում կատարված չէ համապատասխան նշում:
Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝
«ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ օրենքով սահմանված ժամկետում /27.07.2022թ. ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունը:
Ընդունել ի գիտություն, որ «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում /27.07.2022թ. ներառյալ/ շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին
(Ա. Զոբանյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/27» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ բաժնի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Զոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Ս. Չիտչյան
		Լ. Իսահակյան
		Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Տ. Զոհրաբյան